

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԻՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՈՂՄԱՆԱԿՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբիւրիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՍԱՆԸ (Բաղրատայա և Բարձրակայա փողոցների անկիւնը):
Կարողութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրվել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Ամօթաբեր արհեստ.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մի սիրուն օրինակ. Մամուլ. Նամակ ներսանից. Նամակ Կարսից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանական զինուորական նոր ծրագիր. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱ. ԳԻՐՆԵՐ.—ՔՐՈՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տասը տարի գիւղում:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏԱՍԸ ՏԱՐԻ ԳԻՐՈՒՄ

(Յեղողութիւններ)

«Եւ հասկացայ որ միայն հեռուէն
գիտելով ապրելու անարժան է
մարդկային բանականութեան Աստուծոյ մը կանոն սահմանելն ինձ
համար. եթէ քո միտքը կը թել ես՝
կըթէ՛ր և ուրիշները, քո մեծաւոր
ընկեր...»

Պատասխան

Առաջին տպագրութիւնը, որ մարդ ստանում է գիւղից՝ այդ բնութեան ազդած հիացմունքն է, գիւղի լուսն ու անդորր բնութեան հիացմունքն է. Եւ իսկապէս, ինչ կարող է լինել աւելի զեղեցիկ, աւելի բանաստեղծական, քան անասանման հորիզոնը, լայնատարած դաշտերը, անտառապատ սարերն ու ձորերը, երկինքն ու գետինը, որոնց ծոցումը մէն-մենակ, աշխարհից կտրված ու մոռացված, լինին իր համար ապրում, հանգստի և գիւղը: Միայնութեան, անգործութեան ու զեղեցիկութեան տպագրութիւնները միանալով մեզ վերացնում են իրական, աղակալի աշխարհից: Մենք մեզ գտնում ենք մի անսովոր, երանական աշխարհում, ուր ամեն բան կախարդում է մեզ: Ինչքան էլ սիրտը ցաւերով ու վշտերով լցված լինի՝ մայր բնութիւնը, կարծէք, մէկ-մէկ կուլ է տալիս ձեր ցաւերն ու հառաչանքները իր խոր կրքերի մէջ և խաղաղութիւն ու հանգստութիւն զգում ձեր յուզված ու անհանգիստ ոգու մէջ: Փարատվում են թախծին ու մռայլը. նորից պայծառ հայեացքներ, նորից եռանդ ու կենդանութիւն է գալիս մարդու վրա: Մի անգամ բնութեան սովորելուց,

ԱՄՕԹԱԲԵՐ ԱՐՋԵՍ

Անհրաժեշտ ենք համարում հրաւիրել մեր հասարակութեան ուշադրութիւնը մի տեղի երևոյթի վրա, որ երևան է եկել վերջին տարիները: Մեր խօսքը մուրացկանութեան զարգացման մասին է: Հայ ժողովուրդը միշտ աշխատել է իր ձեռքով, իր քրտինքով հայթայթել իր ապրուստը, և մեծ ամօթ է համարել ձեռքը մեկնել ուրիշին և հաց կամ փող մուրա: Միայն ֆիզիքական մեծ պակասութիւններ ունեցողը, կոյրը, անգամալոյծը և հաշմանդա-

նրա հետ կապվելուց յետոյ, դժուար է հեռանալ, մոռանալ նրան:

Եթէ մեզ վրա նա այսքան է ազդում, ինչքան աւելի խորն է լինում նրա ազդեցութիւնը երկարադրժ գիւղացու վրա, որ ամօթապէս և իր ամբողջ էութիւնով նրա հետ է կապված, օրօրոցից նրա հետ մեծանում, նրա օրէնքներին հնազանդվում, նրա կեանքով ապրում, հացը նրանից է ստանում: Եւ ոչ միայն նրա ֆիզիքական կապովա՞ծը, այլ և սիրտն ու հոգին, նրա ներքինը, նրա ամբողջ բարոյական աշխարհը սնվում, զարգանում է գլխաւորապէս և ամենից առաջ մայր բնութեան ազդեցութեան տակ: Գիւղացին իսկ և իսկ բնութեան որդի է, ոչ որ նրա պէս մօտիկ չէ նրան. ոչ որ նրա չափ չէ ճանաչում նրան: Նա ամեն մի տեղի խնայալուց, արեւի ու լուսնեակի ծագելուց, աստղերի պլպլալուց, ամպերի ձևից ու գոյնից, հաւերի վեր ու վայր թռչելուց, նրանց ծլլալուց, կենդանիների ձայնից և հարկւրաւոր ուրիշ նրա շուններից իսկոյն իմանում, գուշակում է բնութեան միտքը, թէ ինչ է ուզում նա, ինչ է դառնալու և ինչպէս է փոխվելու:

Եւ ինչքան յայտն է հառաչանքներ են կապված այդ նշանների ու փոփոխութիւնների հետ: Նրա կեանքը, նրա բաղդը, նրա ուրախութիւններն ու վշտերը—բոլորը բնութեան ձեռքն են: Նրան է նայում, նրա ձեռքին մօտիկ տալիս, նրան աղբսում ու աղօթում՝ որ իր ցանածը պահի ու մեծացնի, իրան քաղցած չը լինի, դռնէ դուռ չը դնի: Ո՞վ պիտի նրան խղճալ ու հաց տայ: Աշխարհում նա մարդկանցից այնքան չէ սպասում, այնքան յոյսեր չունի՝ ինչքան մայր-բնութիւնից: Դրա համար չէ որ նա այնքան իդէալացնում, պաշտում է նրան, անգիր տակցաբար վերագրելով Արարչին այն բոլորը, ինչ որ բնութեան արդիւնքն ու հետեւանքն է լինում: Նա ուղղակի աստուածացնում է, շունչ

մը, իրաւունք է համարել դիմել ուրիշի օգնութեան և համարձակութիւն է ունեցել անէտուն ման գալ և ժողովարարութիւն անել: Բայց վերջին տարիները մեզանում ասպարէզ եկան մուրացիկներ, որոնք և ֆիզիքական ոյժ ունեն և գործելու ընդունակութիւն, բայց դիմում են մուրացկանութեան և հասարակաց օգնութեան: Մուրալը ամօթ չէ համարվում, և յաճախ տեսնում ենք այդ միջոցին դիմողների շարքում նոյն իսկ փղք ի շատ է կրթութիւն ստացած անձանց:

Մենք չենք խօսում այնպիսի բացառիկ լիշուառութեան մասին, որը քնք բերեց մեր երկիրը մեր սահմանակից երկիրներից հաղթաւոր դժբաղդացած մարդկանց: Դա բացառիկ գրութիւն էր, որ և անցաւ, կամ անցնելու վրա է: Այդպիսի դէպքերում մուրացկանութիւնը մի ծայրայեղ քայլ է, որին դիմում է անբաղդացած աշխատաւորը՝ ժամանակաւոր նպաստ ստանալու նպատակով: Այդ գրութիւնը հասանալի է և ներքին: Այդպիսի դէպքերում հասարակութիւնը պարտաւոր է անյայտալ օգնութեան հասնել և խանգարված անասութիւնը վերածել իր նախկին դրութեան, ազատելով մարդկանց բացառիկ ձախորդ պայմաններից:

Սակայն որքան հասկանալի է այդ դրութիւնը՝ այնքան անտանելի և աններելի է այն դրութիւնը, երբ մարդիկ յետ են սովորում աշխատելուց, հեշտութեամբ ձեռք են պարզում նպաստ խնդրելու և մինչև անգամ սովորութիւն և արհեստ են շինում մուրալով ապրելու: Դա բարոյական այլանդակութիւն է, որի դէմ պէտք է կռւել ամեն կերպ և աշխատել արմատախիլ անել նրան: Իսկ կռւելու միջոցներից մէկը այն է, որ բարեգործութիւնը կենսաբանական հասարակական հիմնարկութիւնների մէջ, օրինակ բարեգործական ընկերութիւնների, որբանոցների, ապաստարանների, ժողովրդական տների և ու-

րիշ դրանց նման հաստատութիւնների մէջ, որտեղ կարելի է ուսումնասիրել օգնութիւն խնդրողների վիճակը մանրամասն կերպով և այդ ուսումնասիրութեան հիման վրա գործել նպատակայարմար կերպով:

Արդարադատութեան միջնատրութեան մէջ ներկայումս մի յատուկ յանձնաժողով, որ զբաղված է մուրացկանների և թափառաշրջիկների հարցով, եկել է այն եզրակացութեան, որ ոստիկանութիւնը ինքը չը պէտք է զբաղվի մուրացկանների գործով, այլ բաւականանայ միայն ուղարկելով նրանց հասարակական բարեկեցութեան կամ բարեգործութեան համար նըշանակված որոշ հիմնարկութիւնները: Իսկ ինչ վերաբերում է այդ հիմնարկութիւններին՝ պէտք է աշխատել, որ դրանք կարողանան աշխատանք տալ մարդկանց և բանեցնել աշխատանքի տներում և յատուկ կոլոնիաներում:

Ցանկալի է, որ այդ խնդիրը շուտով ըստանար դրական լուծում, և արհեստ դարձած մուրացկանութեան դէմ միաժամանակ զինվելին թէ օրէնքը և թէ հասարակական ինքնագործունէութիւնը:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՍԻՐՈՒՆ ՕՐԻՆԱԿ

(Նամակ գաւառից)

Մի քանի ամիս առաջ՝ Վարդապետ գրեթէ սուղէր յողումով (Մշակի № 94) մենք սան էինք, որ թէև տեղական երիտասարդութեան մի մասը մեծ սէր է ցոյց տալիս դէպի ընթերցանութիւնը, բայց, դժբաղդաբար, գիւղում կարգաւ հետաքրքրելի նիւթ չէ գտնում:

Ով որ ապրել է մեր նահապետական գիւղերում, նա գիտէ, որ գիւղացին, բացի եկեղեցական սուրբ գրքերից՝ տապալակաւ ուրիշ արտադրութիւններ չէ ճանաչում: Բայց որովհետև գիւղում գտնված ժամադրերը կատարեալապէս անհասկանալի և բովանդակութեամբ անհետաւթիւն է արտայայտում: Նրա համար էլ կեանքը դոյւթեան կուլ է, բայց այնպիսի դոյւթեան, որ նրան մի կտոր հաց ու հասարակ, աղբատիկ ապրուստ էլ դժուար է տալիս: Ինչ կը լինի այն մարդու տրամադրութիւնը, որ իր ողջ կեանքը հացի ու ապրուստի վրա է մաշում ու կորցնում: Մանր հոգեւորից ու աշխատանքից յետոյ, նրան այնքան ժամանակ չէ մնում, որ հացից, դուրս՝ մի քիչ էլ ուրիշ բանի վրա մտածէ, մի այնպիսի բանի վրա, որ բարձրացնէ նրան գետնի երեսից և կապէ, մօտեցնէ իր պէս տանջվող մարդկութեանը:

Ինչ թվում է, թէ ոչ որ այնքան խղճալի ու թշուառ չէ՝ ինչքան նա, որ գրկված, կտրված է իր պէս մարդկանց հետ հողով ապրելուց: Ոչինչ այնքան չէ հանգստացնում, չէ բարձրացնում մարդուն՝ ինչքան հասարակական զգացմունքը, ինչքան այն գիտակցութիւնը, որ նա անկարելից աչքով չէ անցնել եղադրածների ու բեռնաւորների մօտից: Այդ ոչ միայն մեր կրօնի հիմունքն է, այլ և արդարութիւն՝ բնութեան մէջ դրված: Միթէ միևնոյն չէ ասում բնութիւնը իր բոլոր երևոյթիների ու օրէնքների ներդաշնակութիւնով: Նայեցէք, տեսէք վերև ինչո՞ւ են բերւրիւր աստղերը միասին պլպլում, մարդկանց լոյս տալիս: Ինչո՞ւ դարձաւ անտառներում խիտ-խիտ ծառերը իրար մօտ կուլ են եկել, իրար հետ խղճալում են, իրար հետ դէմ դնում անդ փոթորկին, ինչո՞ւ են երամ-երամ թռչնիկներ իրար հետ թռչկոտում, ծլլում և խուճ-խուճ միասին օտար երկրներ չլուծ... Ամեն տեղ վերենները, երկնք-գետնը, ուր որ նայում էք՝ հասարակական նոյն ներդաշնակութիւնն էք տեսնում: Բնութիւնն էլ չէ սիրում մեռաւորութիւն, ուր մնաց թէ մարդը, մահաւանդ գիւղացին, որ բնութեան բարեբար ազդեցութեան տակ լինելով՝ աւելի քան մարդկային ուրիշ որ և է մի դասակարգ, տրամադրութիւն ու յարմարութիւններ

բերել են, ուստի չեն կարող բաւականութիւն տալ ընթերցասէր երիտասարդներին, որոնց արթնացած ուղեղը որոնում է հասկանալի, հեռաբերելի և թարմ նիւթ: Անհրաժեշտ էր ձեռք բերել մատչելի գրքեր, որոնք կարող լինէին կրթել ընթերցողներին միտքը և ցանկալի ուղղութիւն տալին նրանց, հարկաւոր էր ստանալ լրատվութիւն: Բայց փող չէր կար, քանի որ ընթերցանութեամբ հետաքրքրվողները, համարեա բացառապէս չքաւոր էին, մեծ մասամբ արհեստաւոր ու երկրագործ դասակարգից (հարուստ ամբարտաւերներն և ճարպիկ վաճառականները՝ ոչ փող և ոչ ժամանակ են ունեւած վատնել այդպիսի «դարպակ» բաների վրա):

Բայց և այնպէս, վերջիպէս ընթերցասէր երիտասարդները չը դադարեցին իրանց ճակատի քրտնեղով վատտակած սակաւթիւ կուսակցներին մի մասը յօժարակամ նուիրել մեր տաւոր պաշար ձեռք բերելու համար: Նրանք միացան և որոշեցին շարաթական հինգ-հինգ կուսակցի վեր գալ, որպէս զի գոյացած դուրսարժեքները տան զանազան գրքեր ու լրագիրներ: Այս գործը, որ մի քանի ամիս առաջ է սկսված՝ մինչև օրս աշողովեամբ շարունակվում է և նրա շնորհիւ ընթերցասէր երիտասարդները այժմ ձեռքի տակ ունեն մօտ քսան կտոր զանազան գրքեր և ստանում են մի քանի լրագիրներ: Ի նկատի ունենալով այն հանդամանքը, որ այդ երիտասարդներից շատերը անկարող են առանց ուրիշ օգնութեան՝ կարդալ ու հասկանալ նրանք երբեմն խմբվում են, և ընկերներից աւելի հմուտները կարդում ու բացատրում են միւսներին լրագրական յօդուածներ կամ ուրիշ գրքեր:

Մեր գիւղում տիրող թանձր խաւարի և ապակաւութեամբ մէջ մի բուն երիտասարդների այս համեմատ, բայց գեղեցիկ գործը, լոյսի այս փողբիկ նշույլը՝ մեծ միւլթաբութիւն է պատճառում մարդու և քաղցր յոյսերով լցնում նրա սիրտը: Անս մի սիրուն գործ, որը արժանի է օրինակ դառնալու՝ միութեան մէջ խորխուրդ միւս գիւղերի համար:

Ա. Շահնազարեան

Մ Ս Մ Ո Ւ Լ

Սարսափելի վաթսման էր մատնված թիւրքահայերի գրականութիւնը: Նա... բայց թող «Բերական» շարաթականը պատմէ աղէտը...

Յաւի սիրտ դիտած էր, որ արեւմտեան հայոց գրականութիւնը շատ խորթացած էր, կամ, մեր աշխատակից «Գ.»-ի բացատրութեան համաձայն, «արտաքին ու օտար դիմաձուլութիւններու մեքենական կապում (մի)», քաղաքակրթութեան ու առաջընթացի կապում օգնարարական հետադարձութիւն մի օտար միջնորդի երկուցներուն» ախպէս օր, ունի բարութիւն անելու և հասարակական կեանքով ապրելու: Մտաբերեցէք Արտիսանցի Ազատուն, բնութեան այդ որդուն, տեսէք, թէ ինչքան է ասում իր կրակ դարձած սիրտը: «Այն, երկնային Քաղաքը, Աստուած. քանի աչքս բաց եմ անում, էս քաղաքածը տեսնում, սիրտս կրակ է դառնում, աչքս ծով, բերանս լուսնում, մնում եմ տաքացած, ջնուցած... Հէնց դիտես մէկ ձէն, մէկ թիւ, մէկ աներկող ծոցի տերեւներ խշշալիս, ուղիւ թռչելիս, աղբիւր քըքալիս, բերլիւլը երկնիս, հով փչելիս, չաղ երեսին թափելիս, ամպը գոռալիս, անձրեւը դալիս՝ ինձ ձէն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրայ խնդում, թէ վայելիլ էստոնք, հողմովի մարդ բարի կայ, բարութիւն արա, Արարիչը մեծութիւնն ու խնամքը համաշխարհ, ծագի պէս պտուղ տուր, ծաղիկ պէս հոտ, սալի պէս աղբիւր, պաշտի պէս մասիլ, երկրի պէս հաց, երկնի պէս լիւս: Վայելիր Աստուծոյ բարութիւնը, ուրիշին էլ փայ տուր, աղքատ տեսնելիս՝ կերքը բաց, կշտացրու. դուք վրով անցկենալիս, կանչիր, կուտ տուր. դու առաւ ձեռք ունեցիր, որ առաւ առնես ու բախտաւոր ըլիս...» («Վէրք Հայաստանի»):

Ամեն մի գիւղացի իսկապէս այդպէս է դատում ու մտածում, բայց ինչ արած, որ ձեռքը չէ հասնում, որ ամենքին սիրէ ուղածի չափ, առաւտաւոր բաժնի հանէ: Շատի առածը իրանց էլ չէ հերքել գալիս, ուր մնաց, թէ աղքատի ու զոյլի յետեւին ընկնեն, նրանց կերպն են ու կշտացնեն, թէ և էլ դուռն եկողին պարագայետ չեն դարձնում. քոյր խեղճ ու անձաբ մնացածները էլ թէ մի քան ստանում են՝ նրանցից են ստանում: Սուտ չէ ասում գիւղացին, որ «էլի թէ հողի, հաւաւ կա» իրանց մօտ է:

IV

Գիւղացուն բնութեան ու հողի հետ կապող երկրագործական աշխատանքն է: Նրա կեանքը համարեա ամբողջապէս աշխատանքի մէջ է անց-

նել շարունակվել, տարակուս չը կայ թէ «Այնպէս ամենայն» քիչ առնեն պիտի ողբերգէնք մեր տոհմ. գրականութեան դադարին առջեւ:

Որքան և դժուար լինի այս աշխատակաւ աշխատել մի բան հասկանալ՝ այնու ամենայն, կարելի է գտնել զգալ, որ դա նշանակում է թէ արեւմտեան հայերի գրականութիւնը մեռած էր կամ մեռնելու վրա էր: Բայց... մեծ է երկնի որդիութիւնը: Եւ թող այդ որդիութիւնը էլ պատմէ «Բերական»:

Ասոր առաջին առնելու նպատակաւ տարի մ'առաջ «Բերական»-ի տնօրէն Ս. Կալթեան ու նախորդ խմբագիր Փ. Մանգեանեան ինքնամիտմունքով՝ ձեռնարկեցին բնատուրիկ գրականութիւն մը մշակել: Ուրախաւ թէ պարագայ մըն է կրկնել թէ այս ձեռնարկը, «Բերական»-ի այս նպատակակէտը դիտարկեցաւ. ձեռնհաս, իրապէս տոհմ. գրականութեան առաջընթացի փափաքով անձեքէ:

Աւելի պարզ լեզուի վերածելով այս կտորը՝ կիսանքեր որ «Բերական» վերատեսչեց այդ մեռնող գրականութիւնը: Արդիւս հերոսութիւնը՝ Անկարելի է որ մի տարակալ այդ նշանակութեան թիւնց յետոյ, խմբագրութիւնը իր համար դադարեց չը պատրաստէ: Եւ ահա գալիս է նրա երախտի զնախատութիւնը Միթէ կարելի է ասանց արտասանել կաթեցնելու կարգալ հետեւալը.

Իրաւորէն դժուար գործ էր, կէս դարէն աւելի Արեւմտեան հայոց մէջ դարձնում գրական կանխորոշութեան փոքրութիւնը ցոյց տալով՝ «Նոր-Նոր»-ը կարգից, որովհետեւ «Հին-Նոր»-ը պիտի դաժմով իր բարձունքը ու տուած օրհնութիւնն ու ծափերն իսկ անհանգիստ պիտի ներշնչէր: Այս անախորժ պիտի երևանք մեծագոյն մասին և դուք «Բերական»-ի նիւթական զարգացման ալ վնասէք ան: Այնպէս ալ եղաւ:

Վ. Պալիս հայերը կարող են այսուհետեւ էլ չը նախանձել մեզ: Բոսֆորի ափերում էլ ծնվեցան Աւետիք Արախանեանցներ...

*

Երէկ մենք ասացինք, որ պատերազմը սկսվում է: Այսօր կանանք, որ նա արդէն սկսված է: Պ. Վէլիչկո պատասխանում է պ. Օպոչինին: Յօդուածի վերնագիրը մի և նոյնն է մնացել՝ «Սպառնալիցութիւնը: Բայց այժմ նա միայն ծիծաղ է յարուցանում, այնքան խեղճ ու հասարակ է յօդուածի բովանդակութիւնը: Պ. Օպոչինին էլ պատասխանեց «Топик, Писатель» լրագրում, և նրա պատասխանը «սպառնալիցութիւն» բառի և նրա տակ թաղելով սուտ ակնարկների դէմ է: Ջրերով այդ ակնարկները՝ պ. Օպոչինին յարձակվում է պ. Վէլիչկոի վրա մանաւոր այն պատճառով, որ նա ասել էր՝ թէ «Ванна»-ի ստուգիչներն և զրպարտութիւններին չը համարող և չը հաւատացող ուսուցիչներն:

Նույն օրից, երբ դադարում է աշխատանքը՝ դադարում է և նրա կեանքը: Հողի ծանր ու չաքքալ աշխատանքը, գիւղացու հայեացքով՝ իր համար է ստեղծված. ինքը միայն բանելով պիտի ապրի, ու չի բանի՝ քաղցած կը մնա: Սա գիւղացիութեան առաջին օրէնքն է, աշխատիր, որ ուտես: Փորից սկսած մինչև մեծը, աղքատից մինչև ամենահարուստը ամենքը բանում, աշխատում են և իրանց աշխատանքից ուտում: Այնքան որ, համեմատաբար ֆիզիքական աւելի ծանր ու տաժանելի աշխատանքը խեղճ-անձաբի համար է, իսկ թեթեւ՝ աւելի խելոք ու հարստի: Խելոքը առանց հողի ծանր աշխատանքի էլ եօղ կը գնայ, բայց իր պէս հասարակ ռանչալարը այնքան բարակ խելը չունի. նրանք՝ հողն է թէ իրանց մէջ կան հարուստներ, կամ աւելի ծիծաղեցներ, որ առանց իր չափ բանելու էլ, իրանից լաւ են ապրում, այդ՝ գիւղացու հայեացքով, նրանց խելքին է. նրանք մնացածներից խելոք են: Բայց խելոք են ինչ բաներում. խորամանկութեամբ մարդկանց խաբելու ու գլխելու մէջ: Իսկապէս դրանք են խելոք գիւղացու համար: Մարդ թեթեւ աշխատանքով ապրող, պատու ու խաթր ունենալ, պարտք ու կարիք չունենալ, երբ ուզի՝ փող գտնի, ինչ ուղում է՝ թող լինի:

Ո՞վ է հարցնում, թէ ինչպէս կարող է մարդ թիւ բանելով ապրել, այն էլ այսպիսի նեղ ժամանակ, ու չի քննում նրա բարոյական հայեացքները: Զէ որ նրան ամենքը պատում են գիւղում ու վախենում, իւրաքանչիւր գիւղացի եթէ ձեռքիցը դա՛ կան նրա պէս, բայց խելոք չէ հասնում: Եթէ այսօր ամենախելոք գիւղացին անգամ համոզված է, որ պէտք է երկնայնորին կրթել՝ այդ գիւղացուցան այն պատճառով է, որ կրթվածները համեմատաբար աւելի թեթեւ աշխատանքով իրանից լաւ են ապրում, իր պէս չաքքալութեան չեն դատապարտվում, հանգիստ, առանց քրտնելու ու տանջվելու, հաց են ուտում, խաթր ու պատու են ունենում, բայց թէ ինչ-

ը և վրայիները հայերի գործին են: Ահա ինչ է ասում պ. Օպոչինին.

Ամառեցէ, պ. Վէլիչկո... Զէ որ դուք ուտեք... Իրանք, այդ հայերը, եթէ նրանց մէջ կան անվտանգի մարդիկ, ինչ կարող են մտածել ուսուցիչի և վրայիների մասին, որոնց այդքան անպիսի քանակութիւնը դուք համարում էք այնպիսի մարդիկ, որոնք մի գրոյի համար դաւաճանում են իրանց հայրենիքին: Բայց, բարեբաղդաբար, մենք, ուսուցիչներ և վրայիներս, փոխարին դուքս ենք գտնվում: Հայերը տեսել են և տեսնում են Գովկաում այնքան շատ առաքելի ուսուցիչ և վրայիներ, որոնք իրանց հայրենիքի ճշմարիտ ծառաներ են եղել. հայերը այնքան ձուլվել են այդպիսիների հետ, կազմելով մի ամբողջութիւն և իրանց միջից էլ դուրս բերելով այդպիսի ծառաներ, որ հալիւ թէ նրանցից մէկն ու մէկը այնքան կայ լինի, որ համարէ ձեռք ձեռքի ուտ մարդ:

Մեզ էլ յայտնի է, որ այդպիսի կտորութիւն չը կայ:

*

Մենք շատ անգամ ենք դատապարտել այն վայնասունը, որ Վ. Պալիս հայոց լրագիրների և մեր խաւարածիւնների մէջ բարձրացած է «օտար» անուանված որբանոցների դէմ: Մեծ հաճութեամբ կարդացինք Վերելից լրագրում մի գեղեցիկ յօդուած, որ բողոքում է այդ վայնասունի դէմ: Յօդուածը գրված է Պարտիզակից և բացատրում է, թէ ինչ օտար որբանոցներ են, որոնց դէմ այնքան կատաղի թշնամութիւն է յարուցված: Բանից դուրս է գալիս, որ «օտար» են համարվում այն բոլոր հիմնարկութիւնները, որոնց պահպանող լուսաւորչական հայեր չեն:

Չեմ կարծէր՝ ասում է յօդուածագիրը՝ թէ բողոքական անդիպացին «օտար» կոչ է կաթողի անդիպացին դպրոցը: Չեմ կարծիք նմանապէս, որ պապական Ֆրանսացին «օտար» անուանել լուսաւորչական Ֆրանսացին վարժարանը: Մտնող դաւանանքը չեն շփոթել ազգութեան հետ:

Մենք սակայն: Մենք՝ ափ մը ժողովուրդ, անոնցմէ աւելի խոտապահանջ կը գտնուինք և «օտար» կը հռչակենք ազգին այն բաժանումները, որոնք տարբեր կերպով կը խորհին կրօնական խնդիրներին մէջ:

Եւ բերելով այն փաստը, որ մի հայ խմբագիր նորերումս ցաւ էր յայտնել, որ մի որբանոցի թոխլ է նշանակված մի բողոքական հայ յօդուածագիրը աւելացնում է.

Չեմ կրնար հասկնալ թէ ազգին տարբեր բաժանումները ինչ տրամաբանութեամբ կարելի է «օտար» անուանել կամ անուանարկել: Մարդու մը գուտ դաւանանքը կամ հաւատալիքը չի կրնար դաշն խելը այն ամբողջին, որոնք մէկ մասն է անհրաժեշտ: Լուսաւորչական Մարիսը, բողոքական թորոսը, և կաթողիկէ Վրայիները, թէ և կրօնային դաւանանքով մէկմէկն կը տարբերին, բայց մէկ են ցեղով: Չնայելիս օտար է անոնց երեքին միանգամայն:

Այն՝ այդ նրան չէ հետաքրքրում: Ուրիշ է կարգացող բանը. նա իր հացը, ինչպէս լինի, կը ճարէ. այս նրա հանդուսն է: Տէրտէր կը դառնայ. կարող է գրագիր լինել, «վարպետ» կը լինի, երկնայնի կը կարդացնի, այդ կայ իր կայ: Ո՞վ կուզի՝ թող լինի, բաւական է որ գիր կարդալ իմանայ, շատ չէ իմացել, թիւ է իմացել, ինչ վնաս. չէ որ նա էլ իր գիտեցածի չափ պիտի սովորեցնէ: Ուրիշ բան չը լինի՝ հիւանդի վրա «կարդանալ» կանի, սողմաւ, նարակ կը կարդայ, լուր, փող կամ աքաղաղ կը տան. կամ թէ՛ թուղթ բաց կանի, «գիր» կախարդութիւն կանի, էլի մի բան կառնէ:

Մի խօսքով՝ կարդացող մարդը գիւղում քաղցած չի մնայ, ապաւէս է ասում գտնէ գիւղացին: Ահա և նրա ասածը. «տէրտէր» (տէրտէր)՝ ապրիլը գեղը ձգէ. չանայ (չը կարողանայ) ապրիլը, գետը ձգէ: Բայց եթէ իրան պէս ոչ կարդալ գիտէ, ոչ էլ ուրիշ պարագայունք ունի՝ մնում է հողի գործը, կոշտ և կոպիտ աշխատանքը. թէ ուղում է ապրել՝ պէտք է անպատճառ բանի: Վայ նրան, ով այդ էլ չի կարող. չի բանի՝ չի ուտի: Շատ էլ խեղճանում են նրան, ինչ կարող են անել, առանց բանելու ով կապի, որ նրա վրա միտք անես: Ե՛, երեւի, նրա գիրն էլ այդ է. մտածելով ինչ կաւելացնես նրան. հօ չես կարող փոխել, ինչ որ մարդու համար սահմանված է, նրա բնութեան մէջ՝ դրված է: Թէ մեղաւորութիւն կա՞ ինքն է մեղաւորը. ուրիշն ինչ անէ և ինչ կարող է անել: Վերելից, ման կը գայ, թէ բաղդ ունի՝ աշխատի վրա մի տեղ կը գտնի, մի թեթեւ գործ կը ճարի, փորը կը լցնի. թէ չը լինի՝ հօ կը մեռնի, բանելուց ու տանջանքից կազատվի. ինչպէս որ պարագայ ու դատարկ ձեռքով եկած է՝ պարագայ էլ չետ կերթայ, և ոչ փող կը մնայ նրանից, ոչ էլ իշխանակ. ով պիտի նրան յիշէ:

Չաշխատողը կամ հիւանդ պիտի լինի, կամ մեռած: Հիւանդին, ասենք, խղճալու բան կայ.

Այսպիսի տարրական մտքերի համար «Մշակ» տարիների ընթացքում ամենակատաղի կուրսներ է մղել. և տիրացուական այն «Հաւատարմքը», թէ «արտաքին Հայաստանայց կեղեցից» չի հայտնվում, այժմ միայն վաճառքի խուցերում և յամառ խաւարածիւնի խորշերում են մընացել, թէ և նոր մօղայի մի քանի գործիք վերջերումս այդ մեռած սկզբունքի մեռած պաշտպաններ հանդիսանալ են ուղում: Տիրացուական աղապարտութիւնը հայի ամենամեծ թշնամին է եղել. և թեթեւիկ պատմութիւնը՝ մենք ակամայ հարց պիտի տանք—հրէ է աւելի անուշիկ թշնամին, մի Լանկիթանի, թէ կրօնական այն մոլեռանդութիւնը, որ ազգութեան գրեթէ նշանը՝ հայ տէրտէրի փարպաշն էր համարում...

ՆԱՍՏԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիուս Դին

Կարծէք կրկին փշրվելու վրա են երևանցիները՝ այն վարդապետ յոյսերը, որ տաճում էին երկաթեղու գալու և զլխաւոր կայարանի Նրաւնում շինվելու առիթով: Մասնաւոր տեղեկութիւններից լսվում է, որ զլխաւոր կայարանի Նրաւնում շինվելու հարցը դժուարութիւնների է հանդիպում, և հաւանական է համարվում այն ծրագիրը, որով զլխաւոր կայարանի համար, որպէս յարմարաւոր տեղ, ընտրվի Աղաճալու գիւղը, Նրաւնից 15 վերստ հեռաւորութեան վրա:

Այժմ, Նրաւնի համար կենտական նշանակութիւն ունեցող այդ հարցը, երբ դեռ ևս վերջնական վճիռ չէ ստացել և պետական խորհրդի ընտրութեան առարկայ է, մեր ժողովրդի շահն և պարտականութիւնն է՝ հող անել այդ մասին. պէտք է օր առաւ միջնորդել ուր հարկն է, որ այս կարևոր հարցը լուծվի բարեխաղով կերպով:

Ինչպէս յայտնի է՝ այս հարցին մեր նախագահութեամբ վերաբերվում է շատ լաւ, իր ժամանակին չը խնայելով ոչ մի ջանք գործը աշող տանելու համար: Մեր նոր քաղաքագլուխը՝ որ եռանդաւոր իրաւաբան է, հարկ եղած դէպքում կարող է գործը աշող կերպով առաջ տանել: Արդեօք այսպիսի նպատաւոր պայմաններում լաւ չէր լինի, որ մեր դուռնայն այս առիթով արտակարգ ժողով գումարում և քիչ համարելով այն զոհողութիւնը, որ արեք նա քաղաքական հողերից յատկացնելով կայարանի համար՝ նորից նոր միջոցներ ձեռք առնէր, թէկուզ որոշէր և ուղարկէր մի պատգամաւորութիւն Պետերբուրգ յատկապէս այդ հարցը վարելու համար, չը խնայելով ոչ մի միջոց: Եթէ քաղաքը մինչև անգամ նիւթապէս անկարող լինի այդ գործի համար հարկաւոր ծախսերն անել, մենք ծանօթ լինելով երևանցիների տրամադրութեան այս հարցի վերաբերմամբ՝ վստահանում ենք յոյս

իր կամքից դուրս՝ ստիպված է չաշխատելու: Բայց ինչպէս կարելի է թող տալ, որ ռանչալար մարդը հիւանդ չեղած ժամանակ չը բանի, մեռածին թէ խղճում ես՝ նրան էլ կը խղճաս: Երբ որ չէ բանում, ասել էլ թէ աղբիւր միտք չունի, կեանքից ձեռք է քաշել: Ինքը որ ապրելու վրա չէ մտածում, ով պիտի նրա մեռնելու վրա մտածէ, նա քանի որ չէ բանում՝ նա արդէն նրանց համար ողջ-ողջ մեռած է:

Իւրեւանցի երկաւ հիւանդացողներին էլ չի սիրում, ուր մնաց թէ չը բանող առողջներ: Եղել են դէպքեր, երբ մարդ իր սիրած հիւանդ կնոջ նայելով էլ ձանձրացել է. մէկն էլ պէտք է, որ բանող, չարքալ մարդուն նայէ, հողայ, կերակրէ, ուր մնաց, թէ այնքան բանելուց յետոյ, խեղճը դեռ հիւանդ էլ պահէ: Մէկ կիւրի հիւանդ պառկում է, տան մարդը պիտի նայի, ի հարկէ, պարտաւոր է. անց է կենում երկու շաբաթ. կինը չէ լաւանում, դեղ ու ճար չեն օգնում: Տղամարդու համբերութիւնը կտրվում է, դիմում է խեղճ կնոջ և ասում. «Թէ լաւացի ես՝ խուցիլ: Թէ մեռնող ես՝ մեռնի, որ գտնէ ուրիշը, որ կնոջ մեռնելուց յետոյ տղամարդն առանց ուշացնելու՝ ասածը կը կատարի: Բայց միայն տղամարդը չէ, այսպէս ասած, քաղաքիս. եթէ տղամարդը լինէր հիւանդ՝ անշուշտ կինը պիտի այդ խօսքերին տէր: Ուրիշ կերպ չի լինի, ճար չը կայ, պէտք է աշխատել: Մէկի մահից յետոյ կենդանի մնացողը, տղամարդ լինի թէ կին՝ նորից մէկին գտնում, առնում է և էլի սկսվում է նախկին կեանքն ու աշխատանքը, մինչև որ մէկի մահը նորից կենդանի կտրուի: Երբեք ու մահը իրար հետ են կապված: Երբ կուտն էլ անցնում են նրա համար անգոյն ու անհետ, քանի որ ապրում են. աշխատանքն է միայն երկուս, մեռնելուց յետոյ ոչ հեռք է մընում, ոչ յիշատակ:

Թ. Մուրադեան

